

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ

ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹԵԱՆ ՏՆՕՐԷՆՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ

Դիւանի գրութեամբ ուղարկուեց Կ. Պոլսոյ Հայոց Ամենապատիւ պատրիարքին Նորին Սրբութեան թ. 1109 կոնդակը՝ Ամերիկայում բնակուող Պողոս վարդապետ Գաֆթանեանին հոգևոր կոչումից իսպառ զրկելու մասին։ 1 օգոստոսի, թ. 130։

Կոնդակ օրհնութեան և գոհունակութեան Ատրպատականի թեմի Ամբադիլ գիւղացի Ռոստոմ Տէր-Գրիգորեանի անունով՝ նոյն գիւղում իւր ծախքով և ժողովրդի օժանդակութեամբ եկեղեցի կառուցանելու առթիւ։ 9 օգոստոսի, թ. 1143։

Նորին Սրբութեան մակագրութիւն Տփխիսի վաճառականական բանկի 1914 թ. յուլիսի 31-ի գրութեան վրայ. «Ցանձնում ենք ս. Էջմիածնի ս. Սինոդին ստանալ գրութեանս մէջ յիշուած 2655 ռուբ. գումարը ներփակեալ փոխանակագրով ի հաշիւ նպաստամատոյց Ցանձնաժողովի փոխադրած 94,100 ռուբ. դրամագլխի տոկոսների՝

յօգուտ Դպրոցական Ֆօնդի և կատարել անհրաժեշտ գործողութիւն համաձայն սոյն գրութեան»։ 10 օգոստոսի, թ. 1149։

Նորին Սրբութեան մակագրութիւն Վրաստանի Հայոց թեմի առաջնորդի այս տարուայ օգոստոսի 6-ի, թ. 1195 յայտարարութեան վրայ. «Ի նկատի ունենալով Զխարի հայերին պատահած դժբախտութիւնը՝ պատուիրում ենք ս. Էջմիածնի Սինօդին կարգադրել տալ նոյն գիւղի եկեղեցական-ծխական դպրոցին դպրոցական ֆօնդին յատկացրած գումարի տոկոսներից միանուագ նպաստ հինգ հարիւր (500) ռուբլի Վրաստանի Հայոց թեմի առաջնորդի միջոցով։ 13 օգոստոսի, թ. 1167»։

Դիւանի գրութեամբ յայտնուեց Մայր Աթոռի միաբան տ. Բենիկ վարդապետին, որ Նորին Սրբութեան հաճութեամբ թոյլատրուում է իւր խնդրի համաձայն 1914/15 ուսումնական տարում ևս կրօնի դասեր տալ Տփխիսի Գիմնազիոնում։ 13 օգոստոսի, թ. 1171։

Դիւանի գրութեամբ Երևանի փոխ-թեմական տ. Խորէն եպիսկոպոսի այս օգոստոսի 7-ի, թ. 1487 յայտարարութեան պատասխանուեց հետևեալը. ա) Որտեղ հնարաւորութիւն ունին ուսուցչական խումբ կազմելու, մինչև իսկ սահմանին մօտ վայրերում, պէտք է անպատճառ դպրոց բանալ և ուսումն սկսել ժամանակին. բ) ի նկատի ունենալով մեր ծխական դպրոցների նիւթական անապահով վիճակը, պէտք է աշխատել, որ վարձուած ուսուցիչներին, որտեղ անկարելի է դպրոց բանալ, այլ դպրոցներում պաշտօններ տրուին, իսկ եթէ անհնարին կլինի նոր պաշտօն գտնել և ուսուցիչները վարձուած լինելու պատճառով անպաշտօն կմնան, այդպիսի դէպքում պէտք է փոխադարձ համաձայնութեամբ վարձատրութեան հարցը վերջացնել, որպէս զի թէ ժողովուրդը և թէ դպրոցը կրկնակի չտուժեն. գ) Ցայտնի չէ արդեօք քանի հոգի վարձուած ուսուցիչներից տարուել են զինուոր. եթէ շատ լինեն, արդեօք հնարաւոր է համարուում այդպիսի-

ներին որ և է նպաստ տալ դպրոցներից, մանաւանդ երբ դպրոցները հրաւիրած կլինեն նոցա փոխարէն նորերին։

Ի նկատի ունենալով ընդհանրապէս մեր դպրոցների նիւթական անապահով վիճակը՝ յանձնարարուեց փոխ-թեմական վերջին կէտի մասին յայտնել իւր կարծիքը, խորհրդակցելով հոգաբարձութեան և տեղական ձեռնհաս հասարակական գործիչների հետ։ 13 օգոստոսի, թ. 1173։

Կոնդակ օրհնութեան Աղէքսանդրապոլցի Յարութիւն և Միսաք Տէր-Յարութիւնեան եղբայրների անունով՝ իրենց հաշուով ս. Աստուածածին եկեղեցու ուխտաւորների սենեակները նորոգելու առթիւ։ 18 օգոստոսի, թ. 1178։

Կոնդակ օրհնութեան Աղէքսանդրապոլցի տիկին Սոֆիա և նորա որդի Աշոտ Կարանեանի անունով՝ իրենց ծախքով ս. Աստուածածին եկեղեցու բակը յորդառատ աղբիւր տանելու համար։ 18 օգոստոսի, թ. 1179։

Դիւանի գրութեամբ ուղարկելով Բագուի գործակալ տ. Ղևոնդ աւագ քահանային Նորին Սրբութեան օրհնութեան կոնդակը № 1108՝ յանձնարարուեց Շամախու Հայոց Թեմական Դպրանոցի շինութեան Հոգաբարձութեան երկու անդամի հետ միասին տանել, կարդալ և յանձնել բարեգործ պ. Գէորգ Միրզաբէգեանին։ 18 օգոստոսի, թ. 1180։

Դիւանի գրութեամբ վերադարձուեց Վրաստանի Հայոց թեմի առաջնորդ տ. Մեսրոպ եպիսկոպոսին Արշակ քահանայ Մինասեանի կազմած «Հին և Նոր ուխտ» դասագիրքը և առաջադրուեց յանձնել հեղինակին ու յայտնել, որ դասագիրքը քննողի ուղղումներով թոյլատրուում է տպագրել։ 20 օգոստոսի, թ. 1205։

Դիւանի գրութեամբ ծանուցուեց Սուքաշի գիւղի ծխական Հոգաբարձութեան, որ գիւղում եկեղեցական-ծխական դպրոց բացուելու օրից կտրուի Հին Խրիմի ս. Խաչ վանքի արդիւնքից տարեկան երկու հարիւր ռուբլի։ 20 օգոստոսի, թ. 1207։

Դիւանի գրութեամբ առաջադրուեց Նուխու Հայոց Կառավարութեան առաջարկել հանգուցեալ Աղէքսանդր Սիլիկեանի ժառանգներին շուտով կատարել իրենց հօր կամքը, այն է, վճարել եկեղ.-ծխական դպրոցին արդէն խոստացած 1000 ռուբլի դրամը, որպէս զի հոգևոր իշխանութիւնը ստիպուած չլինի այլ կարգադրութիւն անելու։ 20 օգոստոսի, թ. 1208։

Դիւանի գրութեամբ բացատրուեց Նոր-Նախիջևանի և Բեսսարաբիայի Վիճակային Կոնսիստորիային, որ Կ.-Պոլսոյ Հայոց Ազգային Կրօնական Ժողովը Ամենապատիւ Պատրիարքի նախագահութեամբ ամուսնալուծական գործերին վախճան է տալիս ընդհանրապէս. իսկ բողոքի կամ դժուար պարագաներում Կրօնական Ժողովը դիմում է ամենայն Հայոց Վեհափառ Կաթուղիկոսին և տնօրէնութիւն խնդրում։ 20 օգոստոսի, թ. 1211։

Կոնդակ օրհնութեան պ. Մնացական Յովհաննիսեան Խուսունցի անունով որպէս՝ հանգուցեալ Աւետիք Բալայեան Ղուկասեանցի, նրա դստեր և կնոջ կտակակատար, ջանասիրութեամբ իւր պարտականութիւնը կատարելու առթիւ։ 20 օգոստոսի, թ. 1219։

Դիւանի գրութեամբ խնդրուեց Կ.-Պոլսոյ Հայոց Ամենապատիւ Պատրիարքին յայտնել, թէ արդեօք իւր կողմից արգելք չկայ Տրապիզոնից հեռանալու առաջնորդական փոխանորդ տ. Գէորգ ծ. վարդապետ Թուրեանին, որին Նոր-Զուղայի և Հնդկահայերի դիմումների համաձայն, Նորին Վեհափառութիւնը ցանկանում է կարգել Պարսկա-Հնդկաստանի առաջնորդական փոխանորդ։ 25 օգոստոսի, թ. 1226։

Կոնդակ օրհնութեան Մայր Աթոռի միաբան տ. Համազասպ վարդապետ Համազասպեանի անունով՝ նրա յիսնամեայ վարդապետութեան առթիւ, որ լրացաւ այս տարի։ 25 օգոստոսի, թ. 1229։

Կոնդակ ս. Էջմիածնի Սինոդի անունով, որով առաջադրուեց, Եգիպտոսի Հայկական Ընդհանուր Միութեան

Երևանի նահանգի աղէտեալների օգտին նուիրաբերած երեք հազար բուբլին, Միութեան ներկայացուցիչ բժիշկ պ. Նազարէթ Տաղաւարեանի գրաւոր կարծիքի համաձայն, բաժանել այսպէս. մի հազար բուբլին տալ Օշականի ս. Մեսրոպեան դպրոցի շինութեան, մի հազար բուբլին Աշտարակի ծխական հոգևոր դպրոցի շինութեան, իսկ մի հազար բուբլին Փարպի գիւղի եկեղեցու շինութեան, սակայն այն պայմանով, որ այդ գիւղերը ուսման թոշակից և ընդհանրապէս եկեղեցական-դպրոցական տուրքերից ազատեն աղքատ դասակարգին նոյն նուէրի քանակով, այդիների ցրտահարութեան պատճառով։ Դրամն ուղարկել Երևանի թեմական միջոցով։ 26 օգոստոսի, թ. 238։

ՍԻՆՕԴԻ ՕՐԱԳՐԵՐԻՑ ՔԱՂՈՒԱԾՆԵՐ

Սինօդը՝ Երևանի կոնսիստորիայի միջնորդութեան համաձայն, որոշեց. թոյլ տալ նոյն կոնսիստորիային հոգևոր կոչման մէջ ընդունել Երևանի գաւ. Առինջ գիւղի բնակիչ Տիգրան Տէր Աւետիսեանին և պատուիրել փոխ-թեմակալին ձեռնադրել նրան աւագ սարկաւագ Երևանի Նորք քաղաքամասի համար։ 1 օգոստ., թ. 379։

Սինօդը՝ Կովկասի բարձր իշխանութեան թոյլտուութիւնն ստանալով, որոշեց. պատուիրել Շամախու Հ. Կոնսիստորիային մկրտել Հայաստանեայց եկեղեցու ծիսով Բալաջարու բնակիչ հրէուհի Գերշէնֆելդին, պահպանելով XI հտ. 1 մ. 7 յօդ. յաւելուածով սահմանուած կանոնները։ 4 օգոստոսի, թ. 386։

Սինօդը՝ համաձայն Վեհափառ Կաթուղիկոսի կարգադրութեան, որոշեց. Նորին Սրբութեան օրհնութեամբ ուղարկել Կովկասի յատուկ յանձնաժողովի պատուաւոր նախագահ կոմս Վորոնցով-Դաշկովի անունով Մայր Աթոռի կողմից նպաստ մի հազար ռուբլի պատերազմին մասնակցող հիւանդ և վիրաւոր զինուորների և նրանց ընտանիքների օգտին։ 15 օգոստոսի, թ. 399։